

Հանդիպում Վալերու Շտեֆան Զգոնեայի հետ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Ապրիլի 9-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընդունեց Ռումինիայի Խորհրդարանի պատգամավորների պալատի նախագահ Վալերիու Շտեֆան Զգոնեային:

Հանդիպմանը Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ անդրադարձավ երկու ժողովուրդների պատմական բարեկամական կապերին՝ նշելով նաեւ, որ ռումին ժողովրդի խորը հավատքի, մարդասիրական ազնիվ ոգու շնորհիվ է, որ հայ ժողովրդի զավակները Ռումինիայում կարողացել են կերտել իրենց հոգեւոր մշակութային արժեքները, նշանակալի ներդրում ունենալ Ռումինիայի կյանքի տարբեր ոլորտներում եւ որպես եղբայրներ ապրել ռումին ժողովրդի կողքին: Վեհափառ Հայրապետը ընդգծեց նաեւ, որ երկու ժողովուրդների բարեկամության ակունքներում կանգնած է նաեւ Եկեղեցին:

Իր հերթին Ռումինիայի Խորհրդարանի պատգամավորների պալատի նախագահը, շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար, կարեւորեց երկու երկրների հարաբերությունների առավել ամրապնդումը՝ նշելով, որ պատմությունն ու մշակույթն արդեն իսկ մոտեցնում են երկու ժողովուրդներին: Վալերիու Շտեֆան Զգոնեան անդրադարձավ նաեւ եկեղեցու կարեւոր դերակատարությունը ժողովուրդների կյանքում խաղաղության հաստատման գործում:

Հանդիպմանը ներկա էին Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանը, Ռումինիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Տաթեւ եպիսկոպոս Հակոբյանը եւ Հայաստանում Ռումինիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Կրինա Ռոդիկա Պրունարիուն:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ԲՈՒԽԱՐԵՍՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻՆ

Ապրիլի 9-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընդունեց Բուխարեստի (Ռումինիա) քաղաքապետ Սորին Միտրչեա Օպրեսկուի գլխավորած պատվիրակությանը: